

ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ

Ապուսահրի և Վախախի դուստր Մամախաթունը ամուսնու՝ Արագածոտն, Նիգ գավառների տեր ու Արարատյան աշխարհի կողմնակալ Վաչե Վաչուտյան իշխանաց իշխանի բոլոր շինարարական ձեռնարկումներին մասնակցելուց բացի ինքն անձամբ սկսել ու ավարտել է շատ կառույցներ, հովանավորել է մշակութային հայտնի օջախներ:

Մամախաթուն իշխանուհու[29] առաջին արձանագրությունը 1211 թվականին փորագրվել է Նիգ գավառի (Ապարանի շրջան) նշանավոր կրթական-մշակութային կենտրոն Թեղենյաց վանքի գավթում.

Թվ(ին) ՈԿ (1211): Ես Մամախաթուն, ամուսին
Վաչէի, դուստր Ա...
... արարիք ... ցանի
... եւ այլ արդիւնս անապատս Թեղենե(ա)ց եւ առաջնորդք սորա հաստատեցին...

Արձանագրությունը խիստ հողմնահարված է, սակայն պարզ երևում է, որ նվիրատվական է: Մամախաթունը նվերներով գործակցել է գավթի շինարարությանը:

Հատկանշական է, որ Մամախաթունի շինարարական գործունեությունը միայն հայրենի Արագածոտնում և Նիգում չի սահմանափակվել: Հոռոմոսի վանքը նշանավոր մշակութային կենտրոն էր, ուներ հատուկ գրատուն-մատենադարան: Մամախաթունն այստեղ 1229 թվականին շինություններ է ավելացնում և հատկապես գրատանը նվիրում է մի այգի, որի եկամուտները պետք է օգտագործվեին սովորող աշակերտների և ձեռագրեր ընդօրինակող գրիչների ապրուստն ապահովելու համար: Փաստորեն առաջին անգամ հայ իրականության մեջ հովանավորվում է դպրոցական գործը: Մամախաթունը ձիթհանքեր է նվիրել Սանահնի, Հաղբատի, այգիներ՝ Հառիճի վանքերին:

Ամուսնու հետ համատեղ Մամախաթունը կառուցել է Հովհաննավանքի կաթողիկե, Սաղմոսավանքի Սուրբ Սիոն եկեղեցիները:

Մամախաթունի ամենանշանավոր կառույցը Տեղերի եկեղեցական համալիրն է:

Տեղերի կաթողիկե եկեղեցին, գավիթը, զանգակատները կառուցվել են շուրջ քառորդ դարի ընթացքում: 1232 թվականին Մամախաթունը գավթի շքամուտքի բարավորին փորագրել է տալիս իր հայտնի շինարարական արձանագրությունը, որի համաձայն

...Ես՝ Մամախաթունս, շինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր
եւ զժամատունս յիշատակ ինձ
եւ առն իմոյ Վաչէի...:

[29] Վ. Պետրոսյանց, Վաչուտյան իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը, «Էջմիածին», 1977, Թ—Ժ (9—10), էջ 84—86: Նույնի Վաչուտյան իշխանների շինարարական գործունեությունը Ապարանի շրջանում, «Հայաստանի բնություն» հանդես, 1980, պրակ 2, էջ 38—39:

Տեղերի եկեղեցին և գավիթը գեղարվեստական կատարումով 13-րդ դարի բազմաթիվ կառույցներից լավագույններից են:

Իր կառուցած այս նշանավոր եկեղեցու գավթում էլ մահվանից հետո թաղվել է Մամախաթուն շինարար իշխանուհին:

ՏՂԱՏԻԿԻՆ

Տղատիկինը պարոն Բռնավորի կինն է: Ապրել է 13-րդ դարի առաջին կեսում: Տղատիկնոջն ու Բռնավորին զավակ չի ծնվել և շառավիղ թողնելու ցանկությամբ նրանք «ոչ ունելով մարմնաւոր զաւակ՝ ցանկացողք եղաք հոգեւոր զաւակի»: Ու թեև ժամանակը խիստ վրդովոտ էր, թաթարները ավերում էին երկիրը, ամուսինները հայ գրչության նշանավոր դեմքերից մեկին՝ մանրանկարիչ Իգնատիոսին, պատվիրում են գրել հոգեմատյան:

Տղատիկնոջ և պարոն Բռնավորի փափագած հոգևոր զավակի՝ հոգեմատյանի վերջին բառը գրվում է 1236 թվականին: Նրանք իրենց «...պայծառ նիւթով և գեղեցիկ գրով և ընտիր բանիւք, ցանկալի ամենայն տեսողաց» շքեղ ձեռագիրը ավանդում են Տեկորի վանքին, որպեսզի իրենց հոգեզավակով՝ Իգնատիոսի գրած ու նկարազարդած ձեռագրով, հիանան շատերը: Չորս տարի անց, Բռնավորի և Տղատիկնոջ խնդրանքով ձեռագիրը վանքին ընծայելու մասին Տեկորի վանքում արձանագրություն է փորագրվում:

Մեծ բանասեր, հայագետ, արվեստաբան Գարեգին արքեպս. Հովսեփյանը գրում է, որ ձեռագիրը սքանչելի էջեր ունի: Ձեռագրի մեջ եղած Տղատիկնոջ և Բռնավորի պատկերները Վարդգես Սուրենյանցը արտանկարել է:

Բռնավորի և նրա կնոջ՝ Տղատիկնոջ հոգեզավակ ձեռագիրը այժմ պահվում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում:

ԽՈՐԻՇԱՀ

Մամիկոնյան Մարծպան իշխանի ու Մամքանի դուստր Խորիշահը արժանիորեն շարունակեց սկեսրոջ՝ Մամախաթունի շինարարական գործունեությունը:

Խորիշահը ամուսնու՝ իշխանաց իշխան Քուրդ Ա Վաչուտյանի հետ շուրջ չորս տասնամյակ իշխեց Արագածոտնում, Նիգում, մասնակցեց ամուսնու բոլոր ձեռնարկումներին:

1255 թվականին իրենց վաղամեռիկ դրստեր՝ Մամախաթունի հիշատակին Խորիշահը և Քուրդը կառուցեցին Սաղմոսավանքի գրատուն-մատենադարանը:

Խորիշահը և Քուրդը կառուցել են նաև Հովհաննավանքի գավիթը, Աստվածընկալի (Ապարանի շրջան) կաթողիկե եկեղեցին և գավիթը[30], նորոգել են Սևանի Առաքելոց եկեղեցին: Նրանք մեծամեծ նվերներ են տվել այդ եկեղեցիներին:

Խորիշահը և Քուրդը հովանավորել են մշակութային գործիչներին: 13-րդ դարի հայ նշանավոր մշակութային գործիչ, պատմիչ Վարդան վարդապետ Արևելցին երկար ժամանակ հյուրընկալվել է նրանց տանը: Նրանց հյուր են եղել Վանական վարդապետը, Գևորգ Սկևռացին: Կիլիկիայի Հեթում թագավորը 1254 թվականին Կարակորում ուղևորվելիս մեկնելու և վերադարձի ճանապարհին իր շքախմբով հյուրընկալվել է Քուրդ Ա-ի և Խորիշահի Վարդենիս գյուղի դղյակում: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ օրերին նույնպես եղել է Վարդենիս գյուղում և գրել է, որ այնտեղ էին գալիս իշխաններ, հոգևորականներ. «Ապա եկին առ նա... (իմա Հեթում Ա թագավորի մոտ) եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք և իշխանք քրիստոնէից»[31]:

Խորիշահ Վաչուտյանը մահացել է 1260 թվականից հետո:

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ

Մամախաթունը Քուրդ և Խորիշահ Վաչուտյանների դուստրն է:

Մամախաթունը մանկահասակ մահացել է: Ծնողները վաճառել են դստեր զարդերը և Սաղմոսավանքի կաթողիկե եկեղեցու ձախ կողմում, եկեղեցուն կից, գրատուն են կառուցել: Գրատան պատին նրանք արձանագրել են.

«Ի թվ(ին) ՉԴ (1255) ես Քուրդս եւ ամուսին իմ Խորիշահ շինեցաք զգրատունս եւ հաստատեցաք զմատուռս յանուն դրստեր մերոյ Մամախաթունին»:

Քուրդը և Խորիշահը գրատանը ոսկետուփ Ավետարան, ուրիշ ձեռագիր գրքեր են նվիրել, տվել են կալվածքներ:

Մամախաթունի անվան գրատան-մատենադարանում ստեղծվել են տասնյակ ձեռագիր մատյաններ:

ՄԱՄՔԱՆ

Ծնողներից՝ Քուրդ Ա Վաչուտյանից ու Խորիշահ Մամիկոնյանից Մամքանը ժառանգեց մշակութանվեր անսպառ եռանդ:

---

[30] **Վ. Մ. Պետրոսյանց**, Աստվածընկալի վանքը, «Էջմիածին», 1978, Գ(3), էջ 57—61:

[31] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 370:

Ամուսնանալով Դոփի՝ Զաքարե ամիրսպասալարի քրոջ թոռ, Խաչենի, Ականի, Հանդաբերդի, Սոթի, Շողգահի, Ծարի մեծ իշխան Հասանի հետ, նա աչքի ընկավ որպես իր դարի մեծահարուստ բարերարներից մեկը: Հայրենի տիրույթներում Մամքանը կանգնեցրել է խաչքարեր ու վանքերին նվերներ է տվել:

Մամքանի առաջին թվակիր արձանագրությունն է:

Ամուսնու երկարատև բացակայությունների ընթացքում իշխանությունը ոչ թե Մամքանը, այլ Գրիգորն էր վարում: Արձանագրությունների մեջ Մամքանն իրեն միշտ կոչում է «ամուսին արիականին Հասանայ» կամ ուղղակի «ամուսին Հասանայ»: Հա-



Տեղերի եկեղեցի. ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից, կառուցել է Մամախաթուն Վաչուտյանը 1213—1232 թթ.

Մամքանի ամուսինը՝ Հասանը, մասնակցում էր Հուլավյան տիրակալների արշավանքներին և քաջության շնորհիվ վերանվաճեց իր հայրենի տիրույթները, որոնք նրա որդի Գրիգորը շատ էր սիրում և արձանագրել է. «Կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար՝ սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք եւ պարգև քաջութեան»:

Մամքանը և որդին՝ Գրիգորը, 1267 թվականին նվերներ են տվել Դադի վանքին և արձանագրել են. «...Ես՝ Մամքան, ամուսին արիականին Հասանա եւ որդի մեր Գրիգոր, տէրք գոլով տեղոյս հայրենաւք... ի ՁԺԶ թվին տուաք ի ՍԲ ուխտս զԾովատեղ, զՋաջուռանց, զՉոլբեկանց»[32]: Սա սանի հիշատակին Մամքանն ու Գրիգորը Դաշքենդի Աստվածածին եկեղեցուն են նվիրել «զՁորին ջաղացն, զՇալին հողն, Ստեփանոսի ջաղացադռան խոտն»:

Քաջակորով ամուսնու մահից հետո էլ (1287 թ.) Մամքանը որդու և հարսի՝ Ասփայի հետ նույն ջերմեռանդությամբ շարունակում է իր մշակութանպաստ գործը:

Մամքանը մահացել է 1298 թվականին ու թաղվել է հայրենի Դադի վանքում:

ՄԻՆԱԽԱԹՈՒՆ

Մինախաթունը Խաչենի մեծ իշխան Հասան Զալալ-Դոլայի դուստրն է, Օրբելյան մեծ իշխան Լիպարիտի որդի իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի կինը:

[32] Մակար վրդ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 205:

Տարսայիճ Օրբելյանի պատմիչ որդին՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը, բավականին մանրամասն նկարագրել է հոր երկրորդ ամուսնության հետ կապված մանրամասները: Նա գրել է. «Սա (հայրը՝ Տարսայիճը—Վ. Պ.) առեալ զթագաւորն Վրաց Դաւիթ՝ գնայր ի տունն Խաչենոյ, առ որդի մեծ իշխանին Զալալին Աթաբէկն. և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զՄինա-խաթունն...»[33]:

Տարսայիճը Մինախաթունի հետ ամուսնացել է առաջին կնոջ՝ Արուզ խաթունի կենդանության օրոք և գերապատվությունը տվել է նրան:

Մինախաթունը ժառանգել է մոր՝ շինարար իշխանուհի Մամքանի լավագույն գծերը: Նա էլ մոր նման շինարար ու բարերար էր: Մասնակցել է ամուսնու շինարարական ձեռնարկումներին, նվերներ է տվել մշակութային կենտրոններին:

Մինախաթունի և Տարսայիճի առաջին համատեղ կառույցը 1272 թվականին Սիսիանի շրջանի ներկայիս Դարբաս (հնում Ըղուերծ) գյուղում կառուցած սուրբ Աստվածածին եկեղեցին է: Եկեղեցին կառուցվել է որպես Տաթևի լուսագին և ապահովվել է կալվածքներով: Այդ է վկայում արձանագրությունը. «...շինեցաք Ա(ստուա)ծածինն ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակին հողն, և ներքի ծաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսագին...»[34]:

1274 թվականին Ազիզբեկովի շրջանի Եղեգիս գյուղում (այժմ Ալայազ) Տարսայիճն ու Մինախաթունը սուրբ Նշան եկեղեցու մոտ կառուցել են իշխանական տուն, որի մուտքի (դարպասի) կամարակալ քարի վերին շրջանակում փորագրված է.

«Ա(ստուա)ծ շնորհաւոր անէ դարբաս բարոն Տարսայիճին, Մինայխաթունին՝ իւր ամուսնաւ թվ(ին) ՉԻԳ (1274)»[35]:

Քարի կենտրոնում եղել են Տարսայիճի և Մինախաթունի քանդակները: Այդ պատկերները կրող քարն այժմ չկա, բայց մեզ է հասել պատկերների նկարագրությունը. «այրն պերճազգեաց, մանեկաւոր և թագակիր բազմեալ ի գահոյս. կինն գանգրահեր և պաճուճազգեստ և խոյրակիր, աջ զգօտուով ածեալ, զձախն ի վերայ ծնկանն ու նեղով»:

1273 թվականին մահացել է Սմբատ Օրբելյանը և մեծ իշխան է դարձել Տարսայիճը: Հավանաբար հենց այդ ժամանակ էլ փորագրվել է Ցաղաց քարի վանքի սուրբ Կարապետ եկեղեցու հարավային պատի արձանագրությունը, որով ամուսինները «...տվաք ի ս(ուր)բ ուխտս Ցաղաց քարոյ ի հայրենեացն մերոց, ի Գեղարքունի զգեղընն Գառնո... եւ ի Մճղոկաձոր զմեր ձեռատունկ այգին Ա... ութեց սպասաք...»[36]:

Մինախաթունի անունը հիշատակվում է Ամաղուի Նորավանքի սուրբ Կարապետ եկեղեցու արևմտյան պատի մեծ արձանագրության մեջ, որը փորագրվել է մինչև 1289 թվականը[37], մինչև Տարսայիճ Օրբելյանի մահը:

Ամուսնու մահից երկու տարի անց՝ 1292 թվականին, Մինախաթունը իր և որդու՝ Զալալի անունից նվիրատվական մեծ արձանագրություն է փորագրել Ամաղուի Նորավանքի Օրբելյանների տոհմական հանգրստարանի՝ Սմբատի դամբարանի հյուսիսային պատին: Արձանագրությունը մեջ ենք բերում ամբողջովին.

«Կամաւ ամենակալին Ա(ստուծ)ոյ. այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի Մինախաթունիս է, դստեր մեծի արքային Զալալին եւ ամուսնո մեծազգի իշխանին Տարսահիճին եւ իմ որդոյս Զալալիս, որ գնեցաք ի մեր հալալ ընչից զՆորպետին այգին ի Վէդի եւ զայլն ի Կորդո գնեցաք ի հայրենատիրացն եւ տնկեցաք, եւ բոլորեցի զ Դ դեհն, Ա ճակատն բնաշահ ռանն ու իր պազումին այգին, Ա ճակատն իրիցին այգին, Ա ճակատն Ոզպեկին այգին, Ա ճակատն բրիհիմին այգին, տեղն ԺԲ գրվի զոր յառաջ այլ տված էր վանիցս՝ մեք մեր յաւժարութեամբ վերստին տվաք ի Նորավանս, յաւագ. ս(ուր)բ Նշանս եւ ի տ(է)ր Ստեփանոս, վասն հոգեց արքաւաշուք տեառն իմոն Տարսահիճին. իսկ տ(է)ր Ստեփանոս եւ միաբան եղբարքս կարգեցին նմա յիշատակ անջինջ զտաւն Համբարձման. զի յայնմ աւուր հանդիսիւ աւրհնեսցեն զշիրիմս նորա եւ Ժ աւր պատարագ մատչի. եւ այս տուրքս ոչ ի զրկանաց, ոչ ի գեղէ, ոչ ի պարոնահոդո այլ մեր հալալ դրամագին՝ ազատ յամէն յարկաց, որ ոչ ում հաշիւ չկա ի հետ: Արդ թէ ի մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց զինչ եւ ինչ պաճառաւ նենգել կամ հանել ջանան զայս այգիս ի Նորավանից՝ կտրեալ լիցին նոքա յերկու կենաց, ընդ աւձին եւ ընդ սատանայի նզովեալ եղիցի յամենակալ բերանէն Ա(ստուծ)ոյ,

---

[33] Ստ. Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 424:

[34] Դիվան հայ վիմագրության, պրակ 2, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1960, էջ 114:

[35] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 115:

[36] Նույնը, էջ 149:

[37] Նույնը, էջ 214:

զԿայենին, զՅուդաին, զՅուլիանոսին առնէ վարձ. ընդ Վասակա ուրացողին դատեսցի, յերից ս(ուր)ք ժողովոյն եւ յամէն սրբոց անիծեալ լիցի ի մահ եւ ի կեանք. եւ թէ տահիկ աւագ փոխի եւ հանել ջանա Ռ,Ռ, Ռ (1000, 1000, 1000) նալաթ լինի, յիւր Մահմետէն ապիզար լինի»[38]:

Ի թվիս ՉԽԱ (1292): Հաստատ է գիրս կամաւն Ա(ստուծո)յ»:

Մինախաթունը մահացել է 1298 թվականին և թաղվել է Ամաղուի Նորավանքում, Օրբելյանների դամբարանում, ամուսնու կողքին: Նրա տապանաքարի վրա փորագրված է.

«Ի թվ(ին) ՉԽԷ (1298): Թագազարմ արքայուհին է Մինախաթունն, դուստր մեծ կողմնակալին Աղուանից Ջալալին»[39]:

Մինախաթունն ունեցել է երեք զավակ. «գեղեցկուղեշ» Ջալալը, Ասփան և Մամքան: Դուստրերից Ասփան ամուսնացել է Խաչենի Ծարա ճյուղից (Դոփյան) Գրիգորի, Մամքան՝ վրաց Դավիթ թագավորի եղբոր որդու՝ Մանուելի հետ:

Իր արձանագրությունների մեջ Ասփան մորը կոչել է «...թագազարմ մօրն իմոյ Մինախաթունին»[40]:

Բարերար իշխանուհուն մահից հետո էլ հիշել են: Պողոս գրիչը 1314 թվականին Գլաձորում արտագրած Ավետարանի հիշատակարանում սիրով է խոսում հայրենասեր ու հայրենանվեր իշխանուհու մասին:

ԳՈՀԱՐ

Գոհար խաթունը ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում:

Գոհար խաթունի որդին՝ Ամիրան, Զուրջի թոռը, 1291 թվականին իր և մոր հիշատակին Տարսայիճ Օրբելյանից 4000 դրամով հողեր ու ջորի է գնել և նվիրել է Վայոց ձորի Ամաղուի Նորավանքին:

Արձանագրությունը փորագրված է գավթի արևմտյան պատին: Ահա այն.

«Ես Ամիրայս, թոռն Զուրջին եկի Նորավանս առաջի ս(ուր)ք Նշանիս ու Չյաղթա այգին որ ի պարոն Տարսայիճէն գնեցի ԴՌ դրամու, ի Գ ջորի, տվի ի ս(ուր)ք ուխտս վասն իմ հոգոյս եւ իմ մաւրն Գոհար Խաթունին: ...թվիս ՉԽ (1291)»[41]:

[38] Նույնը, էջ 238—239:

[39] Նույնը, էջ 237:

[40] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Ե., 1950, էջ 100:

[41] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 220:

ԹԱՃՄԵԼԻՔ

Թաճմելիքը Խալաշահի թոռն է, Մխիթար իշխանի դուստրը, Խութլաբեկի քույրը:

Շարունակելով իր նախորդների ավանդույթը, Թաճմելիքը ամուսնու՝ Սանճարի հետ միաբանել է Թանահատի վանքին և նվերներ է տվել սուրբ Ստեփանոս եկեղեցուն:

Սանճարի և Թաճմելիքի արձանագրությունը, որը փորագրվել է մոտ 1284—1292 թվականներին, հայտնում է, որ նրանք հող են պարգևել եկեղեցուն:

14-րդ դարի առաջին տասնամյակում Թաճմելիքը եկեղեցու հյուսիսային պատին փորագրել է.

«Կամաւն Ա(ստուծո)յ ես Թաճմլըքս, դուստր Մխիթարա, թոռն Խալաշահին տվի Ս. վեցկի...»[42]:

ԱՍՓԱՆ

Ասփան իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի և Մինախաթունի ավագ դուստրն է: Դեռևս հոր կենդանության օրոք, 1287 թվականից առաջ, նա ամուսնացավ Խաչենի Ծարա Դոփյանց ճյուղից Հասանի որդի Գրիգորի հետ:

Ասփան թե՛ հայրական, թե՛ ամուսնու տանը ապրեց այնպիսի մարդկանց հետ, ովքեր իրենց ամբողջ էությամբ նվիրված էին հայկական մշակույթին: Հայրական տանը նրա համար այդ օրինակը մայրն էր՝ շինարար իշխանուհի Մինախաթունը, ամուսնու տանը՝ սկեսուրը՝ Մամքան Վաչուտյանը: Ասփան, իր ժամանակի ոգուն համապատասխան, իր իշխանության սահմաններում կամովին ստանձնում է մշակույթի ու լուսավորության բնագավառի ղեկավարությունը:

Ասփան և Գրիգորը, ինչպես ճշտորեն նկատել է պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը, խիստ կապված են եղել իրար և «նրանց միջև եղել է պաշտամունքի հասնող մի սեր»[43]: Այդ են վկայում մեր օրերը հասած արձանագրություններն ու հիշատակ-վկայությունները: Ահա մի քանի օրինակ: Թաթարների հետ արշավանքի գնացած ամուսնու բացակայության ժամանակ Ասփան հայրենի Խաթրավանքում բեմի սեղան է կանգնեցնում և արձանագրում «նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի»: Նույն

[42] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 79:

[43] Բ. Ուղուբաբյան, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում, Ե., 1975, էջ 316:

սիրով Գրիգորը հիշում է Ասփային: 1311 թվականին, Ասփայի մահվանից հետո, Գրիգորը ոսկով ու արծաթով զարդարում է իրենց գնած «Թարգմանչաց» Ավետարանը «Ի յիշատակ հոգւոյ ս(ուր)ք ամուսնոյն իւրոյ Ասփային»: Նույն հիշատակարանից իմացվում է նաև, որ Գրիգորը Խաթրավանքին գյուղեր, այգիներ, զանազան սպասքներ, եկեղեցական զգեստներ է նվիրել ի հիշատակ «գերեզմանին նորա»: Մեկ տարի անց Գրիգորը իր կնոջ՝ «դստեր արքայաշուք իշխանին Տարսայիճի» հիշատակին երկու այգի է նվիրում Ամաղուի Նորավանքին, որն հանդիսանում էր Օրբելյանների տոհմական գերեզմանատունը:

Ասփայի աչքի ընկնող գործերից է Թարթառ գետի վրա կառուցված կամուրջը: Կամուրջի շինարարական արձանագրության մեջ նա նշել է. «յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից և ապագայից»[44]: Ասփան մի գեղեցիկ խաչքար է կանգնեցրել Խաթրավանքում: Ասփայի մշակութային գործունեության պսակն է համարվում «Թարգմանչաց» անունով հայտնի Ավետարանը: Ավետարանը 1232 թվականին գրել է Տիրացու գրիչը, ծաղկել է պարոն Հովհաննեսը[45]:

Ասփան ձեռագրի երկրորդ ստացողն է: Ասփայի մահից հետո Գրիգոր իշխանը շքեղացրեց ու զարդարեց Ավետարանը և այն նվիրեց Խաթրավանքին: Ասփայի հիշատակին նվիրված Ավետարանը դարձել է Ծարա առաջնորդների սրբազան հարգությունը: Ավետարանի էջերում գրվել են տիրույթների ցանկերն ու սահմանները: Հետագայում Ավետարանը հայտնվել է Գանձակի Բանանց գյուղի մոտ գտնվող Թարգմանչաց վանքում:

Ասփան թաղված է Խաթրավանքում:

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ

1310 թվականին Մամախաթունը Հովհաննավանքում Սարկավագ գրչին Ավետարան է պատվիրել:

Մամախաթունի հիշատակարանից երևում է, որ նա տեղացի է: Նա այդ մասին գրում է. «ազատազարմ և իշխանութեան մերոյ գաւառիս Քրդին, որդոյ Տայիրին, թոռն մեծին և բարեպաշտ Քրդին»: Մամախաթունի ծնողներն են Սուպանը և Տիկնանցը, եղբայրներն են Հազարբեկը, Կուկորն ու Ամիրը: Հավանաբար սրանք Քուրդ Բ Անբերդցու ծառայողներից էին:

Մամախաթունի ամուսինը Զաջուռ իշխանն է «որ թէպէտ ազգաւ վիրացի գոլով, այլ կամաւք բարեկամ ամենայն եկեղեցեաց»[46]:

Հնայած ժամանակը խիստ աննպաստ էր, ինչպես գրում է Սարկավագ գրիչը, «զաղէտս և զողբ տարակուսացս ո՞ պատմեսցէ, զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեա(լ) լինի ուստերք և դստերք աշխարհիս մեր, և բազում գեղք և վանորայք աւեր և անհանգիստ, և քահանայք տարաշխարհիկ լինի», բայց նույն տարում էլ ընտիր և ստույգ օրինակից արտագրում, գրում է Մամախաթուն իշխանուհու պատվիրած Ավետարանը ու հանձնում նրան:

«Զամենաւրհնեալ բարի տիկինն զՄամախաթունն» Ավետարանն ընծայում է Ուշի գյուղի Սուրբ Սարգիս վանքին:

Շուրջ 130 տարի անց, 1443 թվականին, Կարապետ աբեղան նորոգում և կազմում է Մամախաթունի Ավետարանը: Նա հիշատակարանում գրում է. «Դարձեալ աղաչեմ յիշել ի տէր զիս՝ զկազմող սորա զԿարապետ անարժան աբեղա...»:

Մամախաթունի Ավետարանն այժմ պահվում է Մատենադարանում:

ԹԱՃԵՐ

Թաճերը Ուքանի դուստրն է, Խաչենի մեծ իշխան Պոռշի որդի Ամիր Հասան Ա-ի կինը:

Ամիր Հասան Ա-ն քաջ զորական էր, նա «տանն Աւագի» սպարապետ էր:

Թաճերը աչքի է ընկել որպես գրասեր, մշակութային կյանքը սատարող անձնավորություն: Նրա պատվերով 1286 թվականին գրվել է մի Նարեկ: Թաճերի անունը հիշատակված է նաև Սելիմի ձորում գտնվող Մարտիրոս գյուղից երկու կիլոմետր հարավ-արևելք գտնվող վիմափոր սուրբ Աստվածածին եկեղեցու ներսում 1286 թվականին փորագրված արձանագրության մեջ:

1307 թվականին Թաճերը մի տուն է նվիրել Թանահատի վանքին և սուրբ Ստեփանոս եկեղեցու արևմտյան մուտքի կամարակալ քարի վրա արձանագրել է.

«Թվ(ին) ՉԾԶ (1307) ես Թաճերս, դուստրը Ուքանա, ամուսին Հասանա ասպարապետին հա(յ)ոց, որդոյն Պոռշա, ետու ընծա ի հալալ ընչից իմոց հայրենի տանս մեր...»[47]:

[44] Մ. վ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 196:

[45] Ձեռագիր № 2743, էջ 183բ (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, էջ 866):

[46] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 65—66:

[47] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 76:

Թաճերի որդին է Էաչի իշխանը, որը հոր մահից հետո (1292 թ.) ժառանգել է իշխանությունը:

Թաճերը մահացել է 1313 թվականից առաջ: Այդ մասին որևէ ուղղակի հիշատակություն չկա: Այդ բանը ասելու համար հիմք է հանդիսանում Խաչիկ գյուղի Խոտակերաց սուրբ Նշան եկեղեցու արծաթյա պահարանի վրա փորագրված Էաչիի արձանագրությունը, որից երևում է, որ Էաչիի մայրը ևս մահացել է: Արձանագրությունը թվագրված չէ, բայց հասկանալի պատճառով այն չէր կարող 1313 թվականից ուշ գրվել, քանի որ այդ թվականին մահացել է նաև Էաչի իշխանը:

ԹԱՑԵԿ

Թացեկը գործել է 13-րդ դարի վերջին քառորդում, հոր անունը Սարգիս է:

1290 թվականին նա Սելիմի ձորում, Քարագլուխ գյուղից հարավ-արևելք, խճուղու եզրին, մի մեծ, բնական ժայռաբեկորի վրա, խաչքար է կանգնեցրել: Խաչքարի ներքևի մասում արձանագրված է.

«Ի թիվս ՉԼԹ (1290) ես Թացէկս, դուստր Սարգսի, որդոյ Խորիշահի, կանկնեցի զխաչս ի բարեխաւսութ(իւ)ն ինձ և ծնողաց իմոց. յիշեցէք ի Ք(րիստո)ս»[48]:

ԽԱԹՈՒՆ

Խալաշի դուստր Խաթունի նվիրատվական արձանագրությունը փորագրված է Վայոց ձորի Վերնաշեն գյուղի մոտ գտնվող Թանահատի վանքի սուրբ Ստեփանոս եկեղեցու հարավային պատին:

Ահա այն.

«Յանուն Ա(ստուծո)յ ես Խաթուն դուստր Խալաշի ետու Խ դեկան. տուի ս(ուր)ք եկեղեցիս. կարգեցին...»[49]:

Վիմագետ Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ արձանագրությունը գրվել է եկեղեցու կառուցման ժամանակ, մոտավորապես 1270—80-ական թվականներին: Արձանագրության բովանդակությունից երևում է, որ Խաթունը 40 դեկանը նվիրել է այդ մասի կառուցմանը օժանդակելու նպատակով:

Խաթունի մի ուրիշ արձանագրություն փորագրված է Ամաղուի Նորավանքի գավթի հյուսիսային պատի եզրին: Այդ արձանագրությամբ Խաթունը հայտնում է, որ միաբանել է սուրբ Նշան եկեղեցուն և տվել է մեծ նվերներ.

«... տվի Ց(300) սպիտակ ի յԱռփայ այգի գնեցի»:

Հավանական է, որ Խաթունը Վայոց ձորում հայտնի Խալաշահների իշխանական ընտանիքից է: Այդ ընտանիքի ժառանգները 14-րդ դարի սկզբներին ևս նվերներ են տվել Ամաղուի Նորավանքին:

ՄԼՔՔ

Մլքը Հազարի կինն է: Ամուսիններն ապրել են 13-րդ դարի երկրորդ կեսում: Նրանք երեխա չեն ունեցել և որպեսզի անհիշատակ չմնան Ամաղուի Նորավանքին այգի և տներ են նվիրել: Նրանք այդ նվերները համարել են իրենց հոգեզավակը և այդ մասին գավթի հարավային պատին փորագրել են.

«Կամաւն Ա(ստուծո)յ, ես Հազարի եւ ամուսին իմ Մլքք ոչ ունէաք զաւակ երկրաւոր, ստացաք զաւակ անծեռանալի ըզս(ուր)ք Նշանս եւ տվաք զմեր ձեռատունկ այգին ու Դ դուռն տուն մեր շինած ի Զվա»[50]:

Արձանագրությունը փորագրել է վանքի առաջնորդ Սարգիս Բ-ի առաջնորդության տարիներին՝ 13-րդ դարի վերջին քառորդում:

---

[48] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 177:

[49] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 75:

[50] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 224: